

5799.

18982

ՄԻ ՔԱՆԻ ՕԳՏԱԿԱՐ  
ԽՈՐՅՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱ.ՍԻՐՈՒԹԻՒՆ

ԷՊ. ՓԻՐԲԱԿԻՎԵԼԵԿԵՑԻ



ԲԱՐԵՒ  
ՑՊԱՐԱՆ „ԱՐՈՐ“  
1894

891.99  
Փ-64

891.99  
գի-64

5792

ԿՊ.

ՄԻ ՔԱՆԻ ՕԳՏԱԿԱՐ

# ԽՈՐՀՈՂԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1004  
321/44

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԷՄ. ՓԻՐԲՈՒԻՉԱԳԵՆՑԻ

2003

ԲԱԳԻԿ  
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“  
1894



4493

Дозволено цензурою 9-го Октября,  
1893 г. Тифлисъ.



ՄԱՐԴԿԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԸՆՆՅԱԽԵԼԻ Է



Ղենդանիների մէջ գու մարդկ միայն  
Խմաստնազոյն ես. ով է քո նման.  
Նա ով է կարող որ չզմայլէր,  
Երբ հանճարներդ աշքով տեսնում էր:  
  
Գու երկինքների, ծովի, ցամաքի,  
Անդունդների վրայ գաղափար ունես.  
Սմենայն մի գիւտ քեզ կպատկանի,  
Որոնցմով այս օր կըփառաւորուեն:

Բնութեան վաղանիքը դու լաւ հասկացար,  
Ամեն գիտութեանց թարգմանիչ եղար,  
Սփռեցիր աշխարհ քո բոլոր հանճար,  
Տուիր նոր գիտեր անթիւ անհամար:

Միայն թէ մի բան քեզ չէ յաջողում,  
Քո մեծ խելքովդ տկար ես մնում,  
Որ դու քո համար մի գիրք ստեղծես,  
Նորա մէջ դու քեզ երջանիկ կոչես:

Օրերդ անցնում են տիսուր ու տրտում,  
Քեզ քո հանճարդ օգնել չէ կարում,  
Հարստութիւնդ էլ անզօր է մնում,  
Սրտիդ ցաւերը նա չէ փարատում:

Սոխակը փոքրիկ մի արարած է,  
Երջանկութեան մէջ նա գերագաս է,  
Ասա, ինչով ես այսօր պարծենում,  
Երբ պիտի մեռնիս թշուառութենում:

Շատերին դու խելք, գիտութիւն տուիր,  
Շատերին ուզիդ ճանապարհ ցուցիր,  
Բայց դու քեզ միայն չես զեկավարում,  
Քո իմաստութեամբ մի ելք չես զտնում:

Անյագ ձգտումդ միշտ հարստանալ  
Քո խաղաղութիւն առնում լափում է.  
Ով քիչով կարէ բաւականանալ,  
Գիտացիր դու որ երջանիկ նա է:

Աւաղ, ով դու մարդ, որ քո կարճ կեանքդ  
Յաւով անցնում է այս փուչ աշխալնքում.  
Կրկին չես գալու զործ դնել խելքդ,  
Որ իմաստութեամբ վարուիս նորանում:

Քո փափազներդ չափ սահման չունին,  
Թէ շտեմարաններդ հացով լցուին,  
Շեղջի պես կուտես արծաթ ու ոսկին,  
Ունենաս կալուածք ու դոյք ահազին:

Այս ամենի մէջ տանջվում է սիրոդ.  
Հալւում մաշում է անձդ ու հոգիդ,  
Բայց դու չես կարում քեզ չափաւորել,  
Ծանր հոգսերից ինքդ ազատուել:

Այսպէս կմեռնես անբաղդ էակդ,  
Սլոց թողնելով անխոնիզ վաստակդ,  
Հողին յանձնեցին անշունչ գիտակդ,  
Շուտ կմոռանան քո յիշատակդ:

Հիմայ որ, ով մարդ, այս է քո վախճան,  
Դու պիտի լինիս բարի անպայման.  
Բարի անունը երրէք չէ մեռնում,  
Նա որդոց որդի միշտ թարմ է մնում:



Նրախոյս տար նրան միշտ և անդադար:

ՓԵՌԵՍԵՐ ԿԻՆՔ ԻՐ ԱՌՋՄԵՆԸ ԶԵ ԾԵՌԵՑՈՒՄ



բբ զրախտի մէջ մարդս միայնակ  
Զէր կարող կոչուել երջանիկ էակ,  
Ստացաւ Տէրից մի կեանքի ընկեր,  
Որ անցուցանէ երջանիկ օրեր:

Նա պիտի լինէր մարդուն օգնական,  
Երբ կունենար նա օրեր նեղութեան.  
Նա պիտի քնքոյ իր բարի վարդով  
Կազզուրէր նրան անուշ լեզուոյ:

Այդ այդ կինը, որ տուաւ Տէրը,  
Մարդուս անբաժան միակ ընկերը  
Պիտի ծառայէր իր մեծ կոչմանը,  
Սիրով կատարէր ուխտ ու պայմանը:

Երբ կինը տեսնէր իր այրը տխրած,  
Մեծ հոգսերի տակ նա ծանրաբեռնուած,  
Պիտի մօտենար սրտով կարեկից  
Եւ յայտնէր իրան նրան ցաւակից:

Նա պիտի լինէր ըր տան տնտեսը,  
Առնելով վրան ծանրութեան կէսը,  
Որ իր ամուսնին լծակից դառնար,

Նա պիտի կրթէր իր զաւակները,  
Տնկէր նրանց սրտում Սատուծոյ սէրը,  
Որ դառնան նրանք առաքինի մարդ,  
Ազգի, հայրենեաց թանկագին մի զարդ:

Բայց, աւազ, մի կին, որ փառասէր է,  
Այդ յատկութիւնից նա շատ հեռու է,  
Նա իր կոչմանը չէ պատասխանում,  
Իր ուխտ ու պայման քանդում է, դրժում:

Նա մի սկ օձ է իր մարդու համար,  
Կըմաշէ նրա սիրով անդադար.  
Նրա մէջ չըկայ ինչ կարեկցութիւն,  
Ոչ սիրոտ, ոչ գորով և ոչ գլխութիւն:

Նա մի խստասիրտ հարկապահանջ է,  
Եւ իր խեղճ մարդու անդութ դահիճն է.  
Ոչ մի գրութիւն չէ կարող զսպել,  
Այդ անգլութիւնից նրան յետ պահել:

Ունի թէ չունի—խեղճ մարդը հլու  
Պիտի կատարէ առանց խօսելու  
Ինչ պահանջ նրա այդ կինը ունի,  
Թէ չէ ուզենում հալ ու մաշ լինի:

Նա միշտ դժգոհ է իր վիճակիցը,  
Մեղաղրում է իր լծակիցը,

Որ չունի այնքան մեծ հարստութիւն  
Փափազներին տալ բաւականութիւն:

Տխուր ու տրտում կանցանեն օրեր,  
Կամաց առ կամաց կցամարէ սէր,  
Տունը կղառնայ հոգսերի մի բուն,  
Շատ դիշերները կանցանեն անքուն:

Մեծացնելով նա իր նիստ ու կացը,  
Կըկորցնէ անգամ օրական հացը,  
Խեղճ մարդը չգիտէ որ տեղից ճարէ,  
Կնոջ ախորժակը որ կշացնէ:

Այդպիսի կինը վատ օրինակ է,  
Մի թունաւորիչ անբազդ էակ է,  
Իր զաւակներին սրտով անտարրեր  
Կըպատրաստէ նա մեծ պարագիտներ:

Նա իր ամուսնին սիրում, յարգում է,  
Քանի որ գործը յաջող գնում է,  
Բայց, վայ է եկաւ անաջողութիւն,  
Վրան չի դարձնիլ մի ուշադրութիւն:

Երջանիկ ես, մարդ, թէ ունիս մի կին,  
Որ քեզ կարեկից կեանքի ընկեր է.  
Դու պիտի զիտես, որ նա անզին է,  
Երբ իր կոշմանը խև ծառայում է:



### ԺԱԾՈՒԿ ԹՅՆԱՄԻՆ ՎՃԵՆԳԱԼՈՐ Է

ատ օրինակներ կարող ենք քերել  
Եւ շատ փաստերով այս տեղ  
հաստատել,

Ծածուկ թշնամին վտանգաւոր է,  
Սկ օձերից էլ նա թիւնաւոր է:

Սա պարզ տեսնում ենք այս  
օրինակում,  
Որ պատահեց մեր Փրկի օրերում.  
Նա տասներկու աշակերտ ունէր,  
Սմենի վերայ ունէր զութ ու սէր:

Ոչ մէկին նա մի վատութիւն չարաւ,  
Եւ ոչ էլ մէկին կեղծաւրուեցաւ,  
Սմենի համար նա միշտ բարի էր,  
Սմենի վիշտը նա փարատում էր:

Բայց Յուղան նրա այդ աշակերտը  
Վճռեց մատնել իր Վարդապետը,


Նա զարհուրելի թշնամի դարձաւ,  
Տիրոջ երախտիքն ստնակոխ արաւ:

Կան ևս մարգիկ, նախանձը սրտին  
Յուղայի պէս էլ քեզ կհամբուրեն.  
Բայց հէնց որ պատեհ ժամանակ զտնեն,  
Իժ օձի նման իսկոյն կլսայթեն:

Եղուիթական շատ ստոր հոգւով  
Չեն դադարում քո վատդ խօսելով.  
Տեսնում ես նրանք խոր հոր են փորել,  
Քեզ երկու ոտով նրա մէջ քցել:

Բայց արդարագատ կայ երկնային Տէր,  
Որ տեսնում է նրանց անհամար զոհեր,  
Հէնց մէկ էլ տեսար, որ նա զլորեց  
Սյդ եղուիթներին անդունդը ձգեց:

Միայն թէ երկար նա համբերում է,  
Որ նրանց բաժակն էլ կատարեալ լցուէ,  
Բայց նա չէ կարող երբէք մոռանալ  
Սյդպէս չարերին արդար պատիժ տալ:



### ՄԹԱԸՆ ՄԻ ՄԵՒ ԹՅՈՒԵՌՈՒԹԻՒՆ Է

ատերից կլսես մօղայից գանգատ,  
Շատ հարուստներին շինեց նա  
աղքատ.

Ամենքը կզգան մօղայի բեռը,  
Որ տուաւ նրանց գեղեցիկ սեռը:

Կլտիրապետէ ինչպէս թագաւոր,  
Նա հրամաններ կըտայ նորանոր.  
Վայ է, որ մէկը չհնագանդէ,  
Շըշաններից նրան դուրս կլոնդէ:

Երբ աղջիկ ծնուեց նա կուրախանայ,  
Որ երկրպագունով կհարստանայ.  
Երբ տեսնէ մայրը իրան զերին է,  
Կիմանայ աղջիկն նրան կհետեէ:

Մայրը սիրում է իր հարազատը,  
Երբէք չի ցանկալ նա նրա վատը.  
Սւադ, որ մօրը պճառասիրութիւն,  
Կըտայ զաւակին վատ ուղղութիւն:

Սյս հիւանդութիւն խիստ տարածուած է,  
Լուսաւորուած կին միշտ ճանաչուած է.  
Նա, որ մօղայի լաւ ճաշակ ունի,

Եր զաւակներին էլ այդպէս կկրթի:

Մարդկանց միջումն էլ կան այնպիսիներ,  
Գովելով կնոշ տալիս են թեր,  
Որ զաւակներին լաւ հազցնում է,  
Օտարներին էլ զարմացնում է:

Թող ուրախ լինի գեղեցիկ մօպան,  
Որ ինքը մենակ չէ և ոչ անպաշտպան,  
Ունի մարդկանց մէջ նա արբանեակներ,  
Կատարել կտայ իր հրամաններ:

Շատ զաւակների նա ուսման վարձը  
Նեղութիւններով էլ վաստակածը  
Շռայիլ կտայ մի կարճ միջոցում,  
Կիժողնէ մարդուս նեղութեան միջում:

Շատ օրիորդներ նա տանը թողաւ,  
Նրանցից մէկն էլ լաւ չհասկացաւ,  
Որ նա իր բազգին իսկ թշնամի է,  
Թէ շատերին դուարճալի է:

Մէկը մի անգամ մի նոր հազստում  
Երբ երեցաւ մի տեղ հանդիսում,  
Թէ որ ջոկ հագուստ նա էլ չունենայ,  
Կամայ ակամայ տան պիտի մնայ:

Երբ մարդը մսխեց մի յայտնի դումար,  
Առաւ մի հագուստ իր կնոջ համար,

Պիտի գիտենայ դեռ շատ պիտի տայ,  
Երբ նորա մօպան փոխուելու գնայ:

Անցեալ տարի նա հարիւր բուրլի  
Տուաւ կնոջ համար մի վերարկուի,  
Այսօր նրան հագնել էլ չէ կարենում,  
Քանզի օտարներ էլ սա չեն հագնում:

Ի՞նչ անէ մարդը, որ տեղից ճարէ,  
Որ կնոջ սիրտը նա ուրախացնէ,  
Փոխ առներով նա մի յայտնի գումար,  
Կառնէ վերարկու իր կնոջ համար:

Սյսպէս խեղճ մարդը միշտ կմախք դառած,  
Ահագին հոգսով նա ծանրաբեռնուած  
Անցուցանում է իր դժբաղդ օրեր  
Եւ տոշորում է երկար գիշերներ:

Անցան երջանիկ այն անհոգ դարեր,  
Երբ մարդ պարզ կեանքով ուրախ և գոհ էր.  
Նրա անգամ քիչ արդար աշխատանք  
Ունենում էր միշտ Աստուծոյ օրհնանք:

Մարզս ապրում էր երկար տարիներ,  
Հոգսով չէին մաշտում նրա ոսկորներ,  
Նա պարզ ուտում էր և պարզ էլ հագնում,  
Շռայլութիւնից իրան յետ պահում:

Այդ ժամանակում ապրելլ հեշտ էր,

Քանզի պարզ ապրուստ միշտ հասարակաց էր,  
Մինը միւսին չէր էլ նախանձում,  
Իր ունեցածի շափ էր նա ապրում:

Փոքր առ փոքր գնաց պարզութիւն,  
Մէջ մտաւ անկապ այդ շռայլութիւն,  
Հասարակաց ուշը վրան դարձնելով,  
Գերի բռնեց նրանց սրտով և հոգւով:

Մարդիկ սկսեցին միշտ իրար նայել,  
Ինչ անում էր մէկը, միւսն էլ անել,  
Մի կախարդական կարծես զօրեղ ձեռք  
Ստիպում է անել, ինչ որ էլ չէ պէտք:

Այսպէս մարդս ընկաւ ծանր հոգսերի մէջ,  
Սկսեց ցաւել, գանգատուել անվերջ,  
Որ իր աշխատանք չէ հերիքանում,  
Որքան աքնում է և քրտինք թափում:

Մօլան մեր կեանքի մէջ խորը մտաւ,  
Ամեն բան նա իր զօրեղ ձեռքն առաւ.  
Կահ ու կարասիք շուտ փոխել կտայ,  
Տիկնոջ համոզել թէ որ կարենայ:

Մեր խնջուքների մէջ կառավարը,  
Մարդկանց և կանանց հրամանատարը  
Շատ տեղ մօդան է, որ թելադրելով  
Շռայլել կտայ մէկի տեղ հինգով:

Ազատ չեն մնում նշանադրութիւններ,  
Թէ հարսանիքներ և թէ բաժինքներ,  
Ուր բռնակալի անողորմ խիստ ձեռք  
Չթողնէր մարդկանց մի ցաւալի հետք:

Այդ անզգամը այնքան շատ լիրը է,  
Որ մեռելոց տուն անզամ կմտնէ,  
Որ հացկերութեան և թէ թագմանը  
Եքեղ ձև տալու տայ հրամանը:

Նաև պաշտամունք մեր կրօնական  
Իր ձեռքը կառնէ անիրաւ մօդան,  
Մեղ կդարձնէ ծեփած գերեզման  
Եւ դուրս կրերէ մարդկանց երեան:

Քրիստոնեայ մարդ ցոյց կտայ նորան,  
Ում վրայ կնկատուի այսպէս մի նշան.  
Արտասունք թափէր, «ախ և ուխ» անէր,  
Թէ և Հոգուցն թափուր էլ լինէր:

Հոգաբարձուք էլ ազատ չեն մօդից,  
Հէնց որ ստացան պաշտօն այն օրից,  
Երբեմն կժողովուեն նրանք խորհուրդի,  
Թէ Աստուած սրան խորհուրդ համարի:

Վարժապետներին ծանօթ է մօդան,  
Շատեր վարժատուն կգնան, կզան,  
Բաւական է որ այն տեղ երևան,  
Թէ կուզ աշակերտն չսովորէ մի բան:

Սա տարափոխիկ մի անճար ցաւ է,  
Թոքախտ, փորացաւ սորանից լաւ է.  
Ինչու չենք կարում մօդից աղատուել  
Եւ մեր օրերը երշանիկ տեսնել:



1007  
32474

ԱՆ ՊԱՐԳՈՒԹԻՒՆԸ ՇԵՏ ՏՈՒՆԵՐ Է ԿՈՐԺԵՆՈՒՄ


Կ ար մի ժամանակ երբ պարզութիւնը  
Ղեկավարում էր ողջ մարդկութիւնը,  
Ոչ նոտար էր պէտք և ոչ էլ մուրհակ,  
Ոչ վկաների մի ամբողջ բանակ:

Եղբարք իրար գէմ ունէին հաւատ  
Եւ վստահութիւն ու սէր անարատ.  
Խարդախութիւնը անսովոր բան էր,  
Անպարզութիւնը շատ ատելի էր:

Եղբարցից մէկը կառնէր իր վերայ  
Ղեկավարելու բոլոր գործերը.  
Ինչ կարգադրէր և ինչ անէր նա,  
Զէին հակառակիլ իր եղբայրները:

Նա իր պաշտօնում՝ միշտ հաւատարիմ  
Անխոնջ կաշխատէր ինչպէս մտերիմ.  
Եղբարցից մէկն էլ չէր կրիլ զրկանք,  
Նրանք ապահով կվարէին կեանք:

Անցան այն դարեր, երբ շատ եղբայրներ,



Ունէին ուրախ երջանիկ օրեր,  
Ապրելով միասին հայրական տան մէջ,  
Չէին ունենալ ոչ կռիւ, ոչ վէճ:

Անցաւ ժամանակ, երբ մարդը իր փող  
Առանց մուրհակի կտար եղբօր փողս.  
Կանյնէր, կզնար օտար աշխարհներ,  
Կդար, կստանար իր տուած փողեր:

Օտարի ձեռքը տալով ինչ ունէր,  
Երբէք մի երկիւղ և կասկած չունէր,  
Որ իր կայրիցը կարող է զրկուել,  
Խեղճ, ողորմելի և թշուառ լինել:

Քաղցը էր քունը նրա աչքերին,  
Հոգսով չէր մաշում նա իր անկողին.  
Սյսպէս կապրէր նա երկար տարիներ,  
Կըտեսնէր որդիք, թոռներ ու ծուներ:

Բայց երբ որ մարդը շատ գիտուն դարձաւ,  
Այդ պարզութիւնն էլ շուտ անհետացաւ.  
Մարդկանցից շատեր դարձան նենդաւոր,  
Գործերում խարդախ և վտանգաւոր:

Նահապետական էլ կարդ ու կանոն  
Չէր կարող զապել մի այդպէս մարդուն  
Եկաւ սուրբ.օրէնք, եկաւ և նօտար,  
Որ կառավարեն այժմեան վատ աշխարհ:

Այժմ աշխարհում նա է ապահով,  
Որ միշտ կշարժէ զգուշութիւնով,  
Որ առաջուց նա պարզ և բացարձակ  
Ամեն բան կդնէ սուրբ օրէնքի տակ:

Բայց, աւաղ, այժմ մի այլ տեսարան  
Կըգայ, կրկանգնէ մեր դէմ յանդիման,  
Սա ողորմելի այն թշուառ տունն է,  
Ուր հին օրէնքը կըժագաւորէ:

Նահապետական կարդ ու կանոնից  
Կուզեն օգտուել ոմանք եղբարցից.  
Ղեկը առնելով մէկը նորանցից  
Միւսներին կնիւթէ հոգս, ցաւ ու կսկիծ:

Պարզութեան տեղը վարկը կըտիրէ,  
Վայ է, որ մէկը կհամար չակուէ  
Նկատողութիւն անել եղբօրը,  
Նա իր ձեռքովը քանզից իր հորը:

Նրանք կտեսնեն, որ հետզհետէ  
Թէ տուն, թէ այդի և թէ խանովթ է,  
Կշինէ եղբայրը գէթ իր անունով,  
Փողերը ձեռքին, ինքն էլ ապահով:

Վախենալով որ մի գուցէ զրկուեն,  
Եղբարք սրտներում միշտ կտանջուեն,  
Եւ չեն էլ կարող նոքա բան ասել,  
Միայն թէ իրանց օրեր անիծել:

Բայց երբ բանն հասաւ ծայրահեղութեան  
Եւ լցուեց եղբարց բաժակ դառնութեան,  
Ամօթ պատկառանք նրանք կոխ տալով,  
Դուրս կըգան հանդէս անպատութիւնով:

Հայհոյանք, բուռն, ցուպ, ատրճանակ  
Գործ գնելով, նրանք կլինին խայտառակ,  
Առնելով եղբարք տան մեծի վարկը,  
Զարդ ու փշուր կանեն ոտների տակը:

Կըբաշեն եղբօր նրանք դատաստան,  
Վարձելով մի քաջ, հմուտ փաստարան,  
Կըլցնեն նրա անտակ մեծ զրպան,  
Աւաղ, անօպուտ, դուրս չի գալ մի բան:

Շատ ուշ է արգէն, ամեն բան անցաւ,  
Ինչ ունին, չունին ողջ հաստատուեցաւ.  
Բոլորը թողած ճարպիկ եղբօրը,  
Կըդնան ողբալ իրանց սկ օրը:

Սյսպէս կըքանդուի այն հարուստ տունը,  
Որ հետեանք է նոյն անպարզութեան,  
Սյսպէս կըչքանայ այն լաւ անունը,  
Որը զոհուում է անարդարութեան:

Եղբարք թողնելով տուն, տեղ, հայրենիք,  
Կառնեն կըդնան իրանց ընտանիք  
Բաղդ որոնելու մի օտար աշխարհ  
Իրանց խղճացած ընտանիաց համար:

Զրկող եղբարը անամօթ, անխիղճ,  
Ապրելով մի մեծ փառահեղ տան մէջ,  
Հարազատների դառն աշխատանք  
Ուտելով, կվարէ ուրախ անհոգ կեանք:

Բայց զրկուածներն էլ ունին մի Աստուած,  
Որ կըտեսնէ նրանց աշքերից թափուած  
Այն դառն արտասուք, որ հեղեղի պէս  
Կըթրչեն նրանց տիրած երես:

Թէ պատիժ և ցաւ մեր այս աշխարքում  
Չըկրեց անձամբ նա իր օրերում,  
Նրա զաւակներ ազատ չեն մնար  
Պատժուելու հօր յանցանքի համար:

Քանզի նա որդոց մի անէծք թողաւ,  
Տուն, տեղ, կալուածք և փող անխիրաւ.  
Այս հարստութիւն երկար չի մնար,  
Աստծոյ օրհնութիւն նրա մէջ չըկար:

Կըտեսնես նաև ընկերութիւններ  
Կըկրեն այսպէս թշուառութիւններ,  
Երբ նրանց բոլոր առետուրներում  
Այս պարզութիւնը չէ թագաւորում:

Ոհ, որքան քաղցր է այն պատառ հացը,  
Որ արդարութեամբ նա վաստակած է.  
Շատ կուրախանայ մեր Աստուածը,  
Երբ մեղ զործերում նա արդար գտնէ:

ՀՅԵՐԵՆԻ ՀՈՂԸ ՄԻՐՈՂԸ ԳԵՐՉԵՎԸ ՄՅԵԿՆ Է



ստուած ստեղծելով Եղեմայ  
Դրախտ,  
Հողի հետ կապեց մարդուս սիրտ  
ու բաղդ,  
Սյովին մշակելու նա պատուէր  
տուաւ,  
Ծուլութեամբ հացը ուտել չժողաւ:

Երկրից պիտի ստանար մարդ իր պիտոյքը,  
Երկրիս հողն է նրա առաջին գոյքը.  
Սյովիս մարդս սիրեց երկրազործութիւն,  
Նրա մէջ որոնեց բազգաւորութիւն:

Երբ ջրհեղեղից նոյը ազատուեց,  
Ամենից առաջ նա այգի տնկեց,  
Քաղցր էր նրա համար սրա արդիւնքը,  
Որդոց էլ յանձնեց այս պարապմունքը:

Նրանք սկսեցին երկիրը մշակնել,  
Իրանց հօր նման այգիներ տնկել,  
Ունեցան դաշտեր, սիրուն հովիտներ,  
Ճոխ բուրաստաններ ու շատ էլ հոտեր:

Հովիւն ածում էր իր քաղցր սրինգը,  
Խառնուում էր սրան մշակի երգը.  
Սյովիս ապրելով մեր նախահայրեր  
Կանցուցանէին երջանիկ օրեր:


Գառնալով մշակը իր աշխատանքից,  
Նա քուն էր մտնում գիշեր այս զլիսից.  
Քաղցր քնելով կանուխ արթնում էր,  
Իր դաշտի վերայ դարձեալ բանում էր:

Մարդիկ սկսեցին շինել քաղաքներ,  
Հոյակապ տներ և ճոխ պալատներ.  
Շատերը դարձան վաճառականներ  
Եւ վաստակեցին շատ անհուն փողեր:

Սրա հետ կորցրին այն խաղաղ կեանքը,  
Որ վայելում էր մշակ համայնքը,  
Սյովիս թողնելով դաշտ, ազարակներ,  
Ընշասիրութեան դարձան գերիներ:

Սոխակի երգը էլ չէր զրաւում,  
Բնութիւնը նրանց օտար էր թւում,  
Վաճառականը նստած խանութում,  
Իր ել ու մուտքի հաշիւն էր տեսնում:

Մշակն է դարձեալ բնութեան գրկում  
իր ուրախութիւն այսօր որոնում.  
Նա է եռանգուն իր հայրենիքում  
Հայրենի հողը սիրում ու յարզում:



Ա Յ Խ Ա Բ Հ Ա Ս Ե Բ



բբ մէկը սրտով յարուած է իսպառ  
աշխարհիս սէրին,  
Զունի բնաւին նա իր սրտի մէջ  
մտածմունք վերին.

Անցնում են օրեր, անցնում շարաթ-  
ներ, նաև տարիներ,  
Նա իր կեանքի մէջ երբէք չէ յիշում  
իր ստեղծող Տէր:

Թէ երիտասարդ, թէ միջանասակ,  
գուցէ ծերունի,

Աշխարհասէք է, երկինք գնալու սէր փափազ չունի.  
Հաճոյ է նրան աշխարհը ում տասն օր աւելի ապրի,  
Քան թէ յաւիտեան Քրիստոսի մօտ ցնծայ ու բերկրի:

Այսպիսի մարդը թող ես բաց ասեմ ում է նմանում,  
Այն երեխային, որ կայ տակաւին իր մօր արգանդում,  
Թէ արդեօք կայ մի ուրիշ լոյս աշխարհ, երբէք չէ  
դպում,

Այն խաւար տեղը քան այս լոյս աշխարհ նա վեր  
է դասում:

Աշխարհիս սիրով, զուարձութիւններով այնքան  
արբած է,  
Ել չէ մտածում Տէրն նրա կեանքի օրեր համբած է.  
Հէնց մէկ էլ տեսար անակնկալ մահով նրան վեր առաւ,  
Ժամանակաւոր զուարձութիւններից գերեզման դրաւ:

Աշխարհասէրն է երկնասէրի կեանքին հակառակ,  
Սա դէպի դժոխը, նա միշտ երկինք է անդադար  
վազում.

Աշխարհասէրի համար է նա հէնց միշտ ծաղը ու  
կատակ,  
Մականուններով նրան խեցած յիմար է կոչում:

Երբ որ տեսնում է, նա արբենում չէ իր հետ միասին,  
Կամ չէ դեղերում չար ճանապարհում իից նրա շաւզին,  
Կրծտացնում է իր ատամները նրա յետեից,  
Եթէ կարէին կըվերջացնէր նա կեանքն աշխարհից:

Երկնասէրն երբ խիստ ցաւակցարար այսպիսի մէկին  
Յորդուում է, թէ այս կամ այն մեղք է, ընդգէմ  
օրէնքին,

Գին, ասում է, զլիսիցս կորիր, մաղձ, առանց քեզ ես,  
Աստուածաշունչը ողջ փորումս է, զիտեմ զրի պէս:

Միթէ չեմ զիտում, հայհոյանք կամ սուտ և թէ  
բամբասանք,  
Կաշառքն էլ սրանց հարազատ եղբայր են մեծ-մեծ  
յանցանք,

Արբեցողութիւն է մայր շատ մեղաց զրկող մարդուս  
կեանք,  
Ատելութիւնը է զուստը նորա, որ է մեծ փորձանիք:  
Ես քեզ ասացի, կորիր զլիսիցս, ինձ մի նեղացնիր,  
Կարող եմ մի օր առանց նեղութեան ձիգ երկար  
շարել,  
Կուզես պարզ ասեմ, նա որ սրտումը հեռ նախանձ  
ունի,  
Երբէք յաւիտեան Քրիստոսի հետ մասն բաժին չունի:  
Մինչև զիտում են ոչ միայն նրանք, որ այս  
գործում են  
Պիտի պատժուին, այլ նրանք ես, որ կամակից են,  
Ես խնդրում եմ. այս մասին զու ինձ երբէք բան  
չասես,  
Ինձ հարկաւոր չէ, զու զիտեցածդ քո համար  
պահես:





Ե Բ Ի Ն Ա Ս Է Ւ Է Ր

րկնասէրն է այս աշխարհքի  
վերայ պանդխտի նման,  
նրա սիրտ հոգին այնտեղ  
է, ուր կայ երկնաւոր Փեսան,  
Որչափ ապրում է փուչ և վա-  
ղանցուկ այս փորձութեան  
տան,

Միշտ կարօտում է, երբ կարժանանայ նրա տեսու-  
թեան:

Իր կարճ օրերը անցուցանում է հանդիստ ու խաղաղ.  
Դիշեր ու ցերեկ աշխարհասէրի պէս չունի ախ, վախ.  
Ոչ ազքատութիւնն է ճնշում հոգին և շինում չոր ճիւղ,  
Ոչ հարստութիւնը ձգում հոգսի մէջ առնում անպտուց:

Երբոր տեսնում է մահուան ժամերն վերայ են  
հասնում,

Անյոյս մարդկանց պէս իր ցաւերի մէջ չէ յուսա-  
հատում.

Իր աշխարհային բոլոր գործերը լաւ կարգադրած,

Ուշը և միտքը իր ճանապարհի վերայ է դարձրած:

Ահա երջանիկ երկնասէր մարդու մի հրաժարական,  
Որ թողնելով կալք, սիրուն զաւակներ և կին պա-  
տուական,

Յետ մնացողներին քաղցր խօսքերով քաջալերում է,  
Բաւականութեամբ, նա ինչ որ թանու է, այսպէս  
օրհնում է:

«Օրհնեալ լինիք գուք, ով իմ զաւակներ, հայրենեաց  
պարծանք,

Որ գուք որդիական երախտագիտութեամբ տուիք  
ինձ յարգանք.

Երկնային Տէրը իր գթութեամբը լինի միշտ ձեր հետ,  
Չեր բոլոր կեանքում չըտայ ձեզ տեսնել ոչ ցաւ, ոչ  
աղէտ:

«Մնաս դու բարեաւ, իմ կին պատուական և կեան-  
քիս ընկեր,

Որ քաղցրացրիր քո ջերմ սիրովն իմ գառն օրեր.  
Թող իմ գերեզման անշունչ անմռունչ սա միշտ  
քեզ յիշէ,

Թէ քո ամուսին քաղցր յիշատակդ հետը կըտանէ:

Իմ ազգականներ և բարեկամներ, մնաք գուք բարեաւ.  
Երկար ժամանակ ձեր հետ ապրելու ինձ վիճակ  
ընկաւ.

Չեր մարդասիրութեամբ իմ շատ օրերը գուք  
քաղցրացրիք,

Մեր Տէր Աստուծուց դուք ամեններդ օրհնուած լինիք:

Դու ինձ պանդխտիս իջևան երկիր, տամ քեզ օրհնութիւն,

Որ ես քո վերայ շրջելով գտի հոգայս փրկութիւն.

Ս.հա իմ Տէրը բառնալու է այս ցաւոյս տրտմութիւն  
Եւ պարզնելու իր աստուածային մեծ ուրախութիւն:

Օրհնեալ լինիք դուք, քաղաքներ, գիւղեր, դաշտեր,  
հովիտներ.

Սարեր ու ձորեր, չէն բուրաստաններ, դալար այ-  
գիներ,

Որ ես ձեր վերայ գիշեր ու ցերեկ օրհնեցի իմ Տէր,  
Հիմա իմ հոգիս ուրախ կըզնայ դէպի երկինք վեր:

Օրհնեալ լինիս դու, ով իմ հայրենիք, որ քո մէջ  
ծնայ,

Ազքս բացեցի գտի շատ սիրուն իմ հոգայս փեսայ,  
Որը դուշակեց, թէ քո օրերդ պիտի վերջանայ,  
Յոյսս կապեցի անանց յաւիտեան հայրենեաց վերայ»:



ԱՅԽԱՐՀՔԻ ՈՒՆԱՑՆՈՒԹԻՒՆԸ



ի կապիր յոյսդ և ոչ քո սէրդ  
չնշին աշխարհին,  
Ոչարստութեան և ոչ մե-  
ծութեան սնոտի փառքին.  
Ոչ նրա քննուց ձբեզ զար-  
դարուն պեղմ պաճուճանքին,  
Կամ զբօսանաց շատ վաղ  
անցաւոր վայելմունքներին:

Մի խարուիր նրա նենդ ու խարե-  
բայ կեղծաւոր լեզուին, /  
Եւ ոչ շրժունքից ժամանակաւոր կաթիլ ծոր մեղքին,  
Բացիր աչքերդ, տես և պատրսղի շար հետեանքին,  
Որ լեզուի տակ ունի ժողոված քեզ թոյն ու լեզին:

Ում արաւ բարի, գութ և օգնութիւն այս թշուառ  
աշխարհ,

Մտածիր, քննիր, դատիր անաշառ և ճշմարտաբար.  
Որին մնաց սա իսկ ժառանգութիւն միշտ և  
յաւիտեան,

Ո՞վ կարողացաւ բնակուիլ սրանում անմահ անվախ-  
ճան:

Ամեն կենդանի, նաև հողեղէն որդի Ս.դամայ,  
թէ այլ և թէ կին, թէ ծեր, թէ մանուկ, աղջիկ  
կամ տղայ  
Թողին գնացին այս տուն սնոտի կամայ ակամայ,  
թէ կուզես եղիր խորին ծերացած հենց Մաթուս-  
աղայ:

Զկարծես աշխարհս, որ լինի հարուստ լի բարու-  
թիւնով,  
թէի հեռուից կերպարանում է չքեղութիւնով.  
Այլ է կոյր, աղքատ, խեղճ ողորմելի, տնանկ ու  
թշուառ,  
իրը մուրացկան չունի քո համար մի հացի պատառ:

Նաև անգութ է, անխիղճ, անողորմ, աշառ դատաւոր,  
Զիգթալ մէկին գուցէ և լինի նոյն խոկ թագաւոր,  
Երկար ժամանակ հու հապատակ նրան սպասաւոր,  
Կեանքն էլ նուիրած, յուսալով նրա փառաց անցաւոր:

Խարեբայութեամբ շատեր մահացուց այս չար անիրաւ,  
Օրոնց նենդաբար դաշինք դնելով նա այս պայմա-  
նաւ՝  
Ուրախ, երջանիկ, հարուստ փառաւոր անել խոս-  
տացաւ,  
Բայց վերջի վարձը նա հատոյց նրանց մի կտոր  
կտաւ.

Շատերին արաւ անուանի մարդիկ տէր հարստութեան,  
Ոմանց երջանիկ զօրեղ թագաւոր և ոմանց իշխան.  
Բայց երբ իմացաւ, թէ պիտի ըմբեն խիստ բաժակ  
մահուան,  
Կողոպտեց նրանց արաւ մերկ անդամ և դրաւ տապան:

Փիլիսոփայութեան կէտից որ նայես աշխարհքի վերայ,  
«Տիկինի խաղ է», կասես զու նորան, և «ուրիշ ոչինչ».  
Երբ երեխսերը ոնց ժամանակաւոր խաղն կվերջանայ,  
Շատ անգամ կլսես լաց ու աղաղակ նաև զոռ ու կոչ:

Սյա, տեսնում ես մեկը ծնւռում է, միւսը մեռնում,  
Մէկը ուրախ է, միւսը տրտում կամ թէ յուսահատ,  
Մէկը հարուստ է, և մէկը միջակ, միւսը աղքատ,  
Սմենքն էլ իրանց վիճակից գոհ չեն և միշտ  
գանգատում:

Մէկը եռանդով միշտ երաղում է, երբ կամուսնանալ,  
Հէնց ամուսնացաւ, նա իր վիճակից դժգոհ կգառնայ,  
Մէկը ցաւում է, թէ ինչունա մի հատ զաւակ չունի,  
Միւսը կասէ շատ զաւակներից զլուխս կուռչի:

Սորանցից որին կասես երջանիկ և որին անբաղդ,  
Բոլորն էլ իրանց վիճակից դժգոհ անում են գանգատ.  
Բայց ես պարզ տոեմ, նա է երջանիկ մեր այս  
Որ իր վիճակում, ինչ կերպ որ նա կայ, չէ յուսա-  
հատում:



18982



Յանկացողները կարող են ստանալ այս գրքոյից՝  
Բավու—Թառահեվի, ,Կասպիանու՝ գրավաճառա-  
նոցում։  
Եամախի—Ենտվր Խւանօվի գրավաճառանոցում։

**ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.**